

ԽԱՉԱՏՈՒՐ ՎՐԴ. ԷՐԶՐՈՒՄԵՑՈՒ ԴԵՐԸ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՆԵՏԻԿՈՒՄ ՀԱՍՏԱՏՈՒԵԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ

Հանրայայտ է Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան բերած նպաստը Հայ Հոգեւոր մշակոյթի զարգացման ընդհանրապէս, նրա իմացական եւ ուսումնակրթական մարզերին մասնաւորապէս: Հանրածանօթ են նաեւ յիշեալ Միաբանութեան՝ Վենետիկ տեղափոխուելու եւ վերջնականապէս Սուրբ Ղազար Հայաշունչ կղզում հաստատուելու հանգամանքները: Վերջիններիցս նախ եւ առաջ յիշատակենք քաղաքական եւ առեւտրական այն սերտ առնչութիւնները, որոնք սկիզբ են առել դարեր առաջ՝ վենետացի վաճառականների արեւելք զալով եւ Վենետիկեան հասարակապետութեան ու Կիրիկիոյ հայկական թաղաւորութեան միջեւ եղած աշխոյժ փոխյարաբերութիւններով: Այդ կապերը, յետադայում, յիշեալ թաղաւորութեան անկումով, ո՛չ միայն չընդհատուեցին, այլեւ աւելի խորացան¹: Բոլոր դէպքերում, Ժէ. դարավերջին վենետահայ գաղութը ա՛յնքան էր բազմացել քանակապէս եւ հզօրացել նիւթապէս, որ ձեռք զարնուեց քաղաքի կենտրոնում գտնուող Ս. Խաչ հայկական եկեղեցու նորոգութեան: Այն, ինչպէս Հ. Ղեւոնդ Ալիշանն է գրում, «մեծահանգէս փառօք օծուեցաւ» 1689ի Յունուարի 8ին²:

Պատմամշակութային կարեւոր նախադրեալ էր, անշուշտ, Վենետիկի՝ հայկական տպագրութեան խանձարուր եղած լինելու հանգամանքը. 1512ին առաջինն այստեղ լոյս աշխարհ եկաւ հայերէն անդրանիկ հրատարակութիւնը՝ «Ուրբաթագիրքը»: Դրան յաջորդած նոսրանոր հրատարակութիւններն ու հայկական տառերով օժտուած տպա-

1. Այս մասին մանրամասն տե՛ս Հայր Ղեւոնդ Ալիշան «Հայ-Վենետ...», Վենետիկ, 1896, նաեւ «Վենետիկ եւ Հայերը» Վենետիկ, 1990:

2. Ամդ, էջ 594:

րանները՝ քաղաքին անունը հռչակել էին որպես հայոց գրառարկության խոշոր կենտրոնի: Իր Մխարանութեան համար Պոլսից ու Մեթոնից յետոյ նոր հանգրուան որոնելու ճանապարհին նման իրողութեան կողքով, բնականաբար, չէր կարող անտարբեր անցնել Մխիթար Վրդ. Սեբաստացին, որի նախանշած հսկայ ծրագրի կարեւոր ուղղութիւններին մէկն էլ զրահատարակչական գործունէութիւնն էր: Խօսելով Վենետիկի առաւելութիւնների մասին՝ վանքիւ ժամանակագիր Մատթէոս Վրդ. Եւդոկիացին առանձնացնում է յատկապէս այս հանգամանքը: Նա գրում է. «Մեծամեծ բարիք մեզ աստի յառաջ եկին, որոց ոչ էր հնար մեզ հանդիպել անդէմ ի Պեղողպոնտիա...», եւ որքան հոգեւոր գրոց տպագրութիւնք եւ պտուղք ի ծաւալմանէ նոցա յազգի մերում եղին, որոց աջողութիւնն ոչ հանդիպէր, եթէ ոչ մեզ յերկիրս յայս փոխի վիճակէր»³:

Ինչ խօսք, անկարելի է չէին եւ Վենետիկի՝ ժամանակի եւրոպական գիտութեան եւ արուեստից նշանաւոր «մայրաքաղաքներից» մէկը, ապա եւ Արեւմուտքում արեւելեան նկարագրի քաղաք լինելու հանգամանքները: Վերջապէս, չմոռանանք նշել նաեւ այն փաստը, որ դեռ դարասկզբին, 1700 թուականին, հալածանքների պատճառով Պոլիսը լքելու ժամանակ՝ Մխիթարին եւ նրա աշակերտներին շատ էր օգնել այդ քաղաքում Վենետիկի գեսպան Լորենցոյ Սորանցոն, որի աջակցութեամբ հերթական հիմնադրար էր ընտրուել Վենետիկի հասարակագետութեանը ենթակայ եւ նրան հարկատու Մոռէա երկրամասն իր Մեթոն բերդաքաղաքով:

Ի շարս այս եւ ուրիշ ա՛յլ նախադրեալների, Մխարանութեան Վենետիկ փոխադրուելու եւ այստեղ վերջնականօրէն հաստատուելու հարցում կարեւոր, ըստ մեզ՝ նոյնիսկ առաջնային դեր խաղաց Մխիթար Վրդ. Սեբաստացու ուսուցիչ, աւագընկեր եւ անկեղծ բարեկամ ժամանակի նշանաւոր գիտնական Խաչատուր Վրդ. Էրզրումեցու (1666-1740) այդտեղ գտնուելու պարագան: Հայ մշակոյթի այս դարգացման, հայկական դասականութեան սկզբնաւորման, եւրոպական միտքն ու գիտութիւնը հայ կեանք ներթերելու գործում: Լէօն նրան հետեւեալ կերպ է գնահատում. «Խաչատուր առաջին մարդն էր, որ միջնորդ հանդիսացաւ արեւմտեան գիտութեան եւ հայերի մէջ՝ գրելով «Բովանդակութիւն ամենայն ուսմանց» անունով աշխատութիւնը»⁴: Նրա դերը սերունդներին աչքին առաւել կարեւորում է՝ պայմանաւորուած Մխիթարի ու նրա հիմնադրած Մխարանութեան հանդէպ սկզբից միայն ունեցած ո՛չ միայն խանդավառ վերաբեր-

3. Մէջբերում ըստ «Բագմավէպ» հայագիտական հանդէսի, Վենետիկ, 1977, թիւ 3-4, էջ 451:

4. Լէօ, Հայկական տպագրութիւն, հաւ. Ա., Թիֆլիս, 1901, էջ 306:

մունքով, այլևս դրա կայացման ու հաստատմանը նպաստակառնողում յամառ ու գործնական ջանքերով:

Միջնադարից նոր ժամանակներին անցման դարաշրջանում, ԺԷ-ԺԸ դարերի սահմանադժին ապրած եւ ստեղծագործած այս երկու առաջադէմ մտածողների՝ Մխիթար Սեբաստացու եւ Ռաչատուրիէր-գրումեցու անձնական-գաղափարական առնչութիւններին, նրանց բարեկամութեան առանձին էջերի անդրադարձել են Մխիթարեան Միաբանութեան ծագման պատմութեամբ զբաղուած գրեթէ բոլոր հեղինակները՝ առանց սակայն չեղտադրելու վերջինի խաղաղած յոյժ կարեւոր դերը մեզ հետաքրքրող հարցում: Արդ, յենուելով նրանց անձնական-ստեղծագործական փոխյարաբերութիւնների որոշ դրուագներին, նաեւ նամակագրական երկարատեւ կապի վրայ, փորձենք տալ ոչ միայն ու ոչ այնքան այդ սրտառու է բարեկամութեան պատմականը, որքան դրա վճռորոշ նշանակութիւնը՝ Վենետիկը որպէս Մխիթարեան վերջնական հանգրուան բնութրելու եւ մնացած քաղաքներից նախապատուութիւնը նրան տալու հարցում:

* * *

Յիշենք թէ ինչպէս տակաւին պատանի Մխիթարը՝ հազիւ 20 տարեկան, երբ ի խնդիր լոյսի եւ գիտութեան ժամանակի կրօնական եւ գիտական կենտրոնները շրջելուց եւ իր մտքի ու հոգու ցանկութիւնները բաւարարող ո՛րեւէ մէկ հաստատութիւն չգտնելուց յետոյ՝ անցնում է Պոլիս, առաջին անձը, որին դիմում է յայտնելով միաբանութիւն ստեղծելու այն ժամանակների համար յանդուգն իր ցանկութիւնը, Ռաչատուր Վրդ. Առաքելեանն էր: Դէպի Պոլիս փութալու որոշման մասին Հայր Յովհաննէս Թորոսեան գրում է. «Լսեք էր Կարմեցի Խաչատուր Վարդապետի համբար, որ այն ժամանակ Պոլիս կը գտնուէր»⁵: Իբրեւ բանիմաց եւ ուսումնական այր նա յարգուած էր պոլսահայ հասարակութեան բոլոր շերտերի կողմից: Յատկապէս Իննովկենտիոս Պապի կողմից որպէս ընծայատուր է ջմիրածին գնալուց (1699-1700 թթ.) յետոյ՝ նրա հեղինակութիւնը աւելի էր մեծացել: Դրա վկայութիւններից մէկն այն էր, որ նա համարձակ քարոզում էր նոյն-իսկ պատրիարքական եկեղեցու բեմից⁶:

Լսելով այդ քարոզները, Մխիթարը վերջնականապէս համոզուում է, որ նա է իր փնտած անձը եւ Ռաչատուր Վրդ.-ի առջեւ ո՛չ միայն պարզում է իր մտադրութիւնը, այլեւ առաջարկում կանգնել գործի

5. ԹՈՐՈՍԵԱՆ ՀԱՅՐ ՅՈՎՀ., Վարդ Միքիթարայ Աբրայի Սեբաստացուց, Վենետիկ, 1901, էջ 116:

6. ԱՅՊ, էջ 273:

գլուխ, դառնալ առաջնորդ: Բայց ինչպես Հայր Արսէն Ղազիրկեանն է դիպուկ նկատում՝ «Մխիթար» կենսագրական պոէմում. «Հասաւ Պոլիս, բայց ոչ՝ փափաքին»⁷. Սաշատուրը ողջունելով և «սքանչելի» համարելով զազափարը, միաժամանակ, որպէս իրապաշտ մարդ, այն անիրազործելի է համարում: Մխիթար Վրդ.ի վարքագիրը՝ Ստեփանոս Վրդ. Ագոնցը, այդ մասին աւելի հանգամանօրէն է գրում. «Եւ քեպետ քազմօք յորդոր յիներ մմա Մխիթար, զամենայն հանգամանս իրացն ըստ կարգի առաջի դնելով մմա. ընդ մմին գլուխ առաջնորդութեան գործոյն գնա կարգելով. իսկ ես, ասէր՝ գործակից եւ սպասաւոր եղէց ընդ ձեռամբ քով, փոյթ կայեալ յուսով խնամոց տեառն: Սակայն եւ այնպէս մա ոչինչ իւրիք զիջաւ ի բանս մորա. ընդ այլոց ընդդիմութեանց եւ զչխառութիւն առաւելապէս պատճառելով»⁸: Ուրեմն, սկզբից Սաշատուր Վրդ.ը կանխազգում է նման ձեռնարկ իրականացնելու դժուարութիւնն ու անհնարինութիւնը՝ չբարոյութեան հետ միաժամանակ բերելով ուրիշների ընդդիմութեան փաստարկը: Որ զա ալդպէս էլ եղաւ եւ ենթադրուող հակառակութիւնները վերաճեցին թշնամանքի ու անբող ատելութեան, ցոյց տուեց ժամանակը: Սակայն, այլեւս կայացել էր իրենց ազգի ապագայով մտահոգ ու օգնելու նախանձախնդիր երկու հայրենասէր հայորդիների ծանօթութիւնը եւ յետագայ ողջ ժամանակի ընթացքում՝ նրանք միասնաբար մաքառեցին յանուն նորաստեղծ Միաբանութեան գոյութեան իրաւունքի: Ու թէեւ մինչեւ իր կեանքին վերջը՝ Սաշատուր Վրդ. էր դրուամեցին այդպէս էլ չզարձաւ Միաբանութեան անդամ, սակայն այն միշտ համարեց իրը⁹:

1697ի Ապրիլին կայացած նրանց ծանօթութիւնը աստիճանաբար վերածուեց իսկական բարեկամութեան: Որքան էլ որ խառնածքով տարբեր՝ Սաշատուրը մեղմ ու հայեցողական բնաւորութեան տէր, իսկ Մխիթարը՝ եռանդուն ու վճռական, նրանք երկուսն էլ պարզորոշ դիտակցում էին, աւելին՝ համոզուած էին, որ արեւմտեան զխառնութեամբ գինեւելով միայն, կրթութեան եւ լուսաւորութեան միջոցով կարելի

7. Ա.ԳՈՒՑ ԱՐՔ. ՍՏԵՓԱՆՈՍ, Պատմութիւն կենաց եւ վարուց Տեառն Մխիթարայ Սեբաստացոյ բարեմապետի եւ արքայի, Վենետիկ, 1810, էջ 117:

8. Այդ մասին ուղղակի վկայութիւն կայ Սաշատուր Վրդ.ի նամակներում, որոնցից մէկում՝ գրուած 1717ի Փետրուար 27ին, նշում է. «Թէեւ ես անոր (այսինքն՝ Մխիթարեան Միաբանութեան) անդամ չեմ, սակայն այս Միաբանութիւնը իմս է, այս միաբանները իմիմներս են»: Տե՛ս Archivio di Prop. Fide, Scritture non riferite, anno 1717. Հմտո՛ւ. ԵԱՐՏՏՄԵԱՆ ՀԱՅՐ ՏԱՃԱՏ, Մխիթարեան Գաղափարական եւ Մխիթարեան Ինքնութիւն, Վենետիկ, 1904, էջ 55: Նոյն տեղում, նկատի ունենալով Մխիթար Վրդ.ի նամակագիրը գրում է. «Այս մարդը իմ ժառանգութիւնն է, անոր Միաբանութիւնը՝ իմ յաջորդութիւնս, ապա չարունակում. ՀԱՅՈՒՆՆԵՐԸ քան չէ, բայց երէ Սաշատուր Առաքելեան ամարժան առաքելայ երկրորդուած եւ անոր Միաբանութիւնը ուրիշ քան չէ, բայց երէ Սաշատուր Առաքելեան ամարժան առաքելայ երջանկապէս քազմապատկուած եւ Աստուծոյ շնորհիւ քազմապատկելի»:

էր իւր ազգը հանել վերելքի եւ առաջադիմութեան ճանապարհը: Պատմաշրջանիս լաւագոյն ուսումնասիրողներից Լէօն Ե. Լաչատուր էր-զրումեցու եւ Մխիթարի անունները իրաւացիօրէն կապում է մեր մտաւոր վերածնունդի շարժման հետ: Նրանց միջեւ սկսուած նամակագրական կապը, որ հիմնականում տեւեց մինչեւ Վենետիկում վերջապէս միաւորուելը, չղաղրեց ոչ մի պահ⁹: Այդ նամակները միմեանց հանգէպ խոր սէր եւ անկաշանք տածող երկու գաղափարակից ընկերների բարեկամութեան յուզիչ վկայագրեր են: Ուշագրաւ է այս իմաստով Մխիթար Աբբայի 13 Հոկտ. 1719 թուակիր նամակը, որում իրեն համակած վիճակը նկարագրելիս՝ գործածում է «կիսամեռ» արտայայտութիւնը: Պատճառը մի քանի տող յետոյ է պարզոււմ. նա չորս ամիս լուր չի՝ ունեցել քաղաքից մեկնած Ռաչատուր Վրդ.ից: Երբ վերջապէս նամակը ստացուել է (4 Սեպտ. 1719ին), նա նախ կըշտամբում է զերյարգելիին, թէ «գիա՞րդ ընդ ելանինն ձեր անտի (Վիննայից կամ Պիկրատից) եւ ի գնալն յայլուր, ոչ գրեցէ՞ք», ապա՝ զփութարանում հաղորդել այն «մեծագունեղ խնդութիւն»ը, որ ապրել է ողջութեան գիրն առնելուց յետոյ¹⁰:

Յիշեալ նամակներում դրանց հեղինակները պարտադիր եւ կանոնաւորապէս միմեանց տեղեկացնում էին իրենց գիտական գրադումները եւ գործադրելիք քայլերի մասին, խորհրդակցում, ապա եւ աջակցութիւն խնդրում, եթէ դրա հարկը կար: Կարգալով զրանք՝ շատ մանրամասնութիւններ ենք իմանում ժամանակի երկու լուսամիտ մտաւորականների գաղափարական աղերսների եւ ստեղծագործական առընչութիւնների վերաբերեալ: Աւելին. յայտնի է դառնում, որ նրանք նոյնիսկ ստեղծագործական խթան են հանդիսացել մէկը միւսի համար: Այսպէս, 1717 Փետրուարի 27ին Հաւատոյ Տարածման Ս. Ժողովի ծիրանաւոր հայրերին ուղղած իր ջատագովական թղթում, Ռաչատուր Վրդ. էրզրումեցին, անդրադառնալով մասամբ իրականացրած եւ զեռ կատարելիք հսկայ աշխատանքին, նշում է. «Իրենն (այսինքն՝ Մխիթարի) համար յօրինեցի բոլոր գիտութիւնները, մանրութեամբ անկաշանք անկաշանք անկաշանք»: Իր հերթին, Մխիթար Աբբայն, հիմնուելով Ռաչատուր Վրդ.ի երկասիրութիւնների վրայ, կաղմել է որոշ զասագրքեր¹¹:

9. Յաւոք, այդ նամակների մի մասն է միայն հասել մինչեւ մեր օրերը: Պահպանուածներն էլ ցրուած են: Որոշ մասով դրանք տպագրուած են (տե՛ս «Բազմավէպ», Վենետիկ, 1921, էջ 396. 1922, էջ 32. Հմմտ. ՏԱՅԵԱՆ ՀԱՅՐ ՂԵՒՈՆԻ, Մայր դիւան Մխիթարեանց Վենետիկյ ի Ս. Ղազար (1707-1773), Վենետիկ, 1930: «Նամակամի Մխիթարայ Աբբայի», հտ. Ա., Վենետիկ, 1961. հտ. Բ., Վենետիկ 1962), որոշ մասով՝ ոչ (անտիպները տե՛ս Մայր Դիւան Ս. Ղազարի, Ռաչատուր Վրդ. Առաքել-հանի նամակներին):

10. Տե՛ս «Նամակամի Մխիթարայ Աբբայի», հտ. Ա., նամակ թիւ 70, էջ 135:

11. Համեմատելով Մխիթարի «Յաղագս մաթեմատիքայի» գիրքը Ռաչատուր էրզրումե-

* * *

1700ի Սեպտեմբերի 8ին ստեղծուած Միաբանութիւնը դեռ ոգեւորութեան եւ բազում գրկանքների երկար ճանապարհ էր անցնելու, մինչեւ որ զար ու հանգրուանէր Ազրիական ծովի ափերուն փռուած Վենետիկի կղզեակներից մէկի վրայ: Մխիթարեան հաստատութեան սկզբնաւորման առաջին տարիների գծուարութիւնները նրա անդամների հետ հաւասարապէս կիսեց, նաեւ յաջողութիւններով խնդաց եւ ուրախացաւ նրանց լաւագոյն բարեկամն ու աջակիցը՝ Պաշտուր Վրդ. Էրզրումեցին: Պաշտուր Վրդ. հրեշտակի նման նա իր պաշտպանութեան տակ առաւ նորածիլ միաբանութիւնը եւ ոյժերի ներածին չափ սատար կանգնեց նրան: Առ Մխիթար Վրդ. Սեբաստացի՝ 11 Ապրիլ 1708 թուակիր նամակում, գրուած Պաշտուր Առաքելեանի կողմից, կարդում ենք. «Եւ ձեռքէս եկածիմ չափ պիտի օգնեմ ձեզի, վասնզի դուք իմ փառքս եւ պարծանքս էք»: Մէկ ա՛յլ թղթում, գրուած արդէն տարիներ անց՝ 1717ի Սեպտեմբերի 22ին, եւ ուղղուած Լիվորնոյի Հայոթեան, նա Մխիթարին անուանում է «պարծանք ազգիս մերոյ»: Սակայն, սրանք լոկ խօսքեր կամ սոսկ յայտարարութիւններ չէին: Թէ՛ պաշտպանական առանձին գրութիւններով, թէ՛ Հոռումում գտնուած ժամանակ անձնապէս, Ս. Բաշանյապետի մօտ եւ Սուրբ Ժողովի առջեւ նա ցրում էր բոլոր երկմտութիւնները՝ կազմուած Մխիթարի անձի ու նրա միաբանութեան գործունէութեան հետ, արդարացիում նրանց եւ զէթ ժամանակաւորապէս հանում իր համախոհների հոգու մօայլը՝ նպաստելով նրանց բեղմնաւոր աշխատանքին: Բանն այն է, որ Պաշտուրն ինքը, որպէս խոհուն գիտնական, վայելում էր «Յաւիտենական քաղաքի» վստահութիւնը, որտեղ «մեր ազգին եւ ընդհանուր արեւելիքի ֆրիատոնէից վերաբերեալ խնդիրներուն մէջ՝ միշտ Պաշտուր Վարդապետին կարծիքը կը հարցնէր, ամէնէն աւելի կարեւոր եւ փափուկ նուիրակնութիւններն անոր կը յանձնուէին եւ շարունակ քղթակցութեան մէջ էր Ս. Աթոռոյն հետ»¹²: Այդ վստահութիւնն ամբողջովին նա ի սպաս դրեց Միաբանութեան կայացման օգտին՝ այն համարելով իր կեանքի գլխաւոր նպատակներից մէկը:

Մխիթարի եւ նրա ձեռնարկած գործի հանդէպ եղած հակառակութիւնների եւ անդադար ամբաստանութիւնների պատճառներին անդրադառնալիս՝ նախ հարկ է յիշել այն իրողութիւնը, որ գիտակրօ-

ցու «Համառօտական իմաստասիրութիւն» աշխատութեան համապատասխան հատուածի հետ՝ Զ. Պ. Անանեան եկել է հետեւեալ եզրակացութեան. «Մխիթար ուրիշ բան ըրած չէ, եթէ ոչ Պաշտուր Վրդ.ի տաղաչափեալ գործը արձակի դարձնելով՝ վերածնլ դաւազմի մը» («Բազմավէպ», Վենետիկ, 1949, թիւ 7-12, էջ 228):

12. ԹՈՐՈՍԵԱՆ Զ. Յ., նշ. աշխ., էջ 538:

նական այս հաստատությունը հալածում էր թէ՛ լատին կղերի, թէ՛ հայերի կողմից: Նորն ու անսովորը թերեւս այն էր, որ ինչպէս Լէնն է նկատուն, «Սբ. Ղազարի վանքը մեզանում վաղուց սկսուած կաթողիկական հոսանքի առջեւ, կանգնեց իրրեւ կրանքիտեայ անկիւնաքար, որ դարձնում էր այդ հոսանքը անմիտ լատինամոլութիւնից եւ ազգատեացութիւնից դէպի հայասիրութիւն»¹³: Սա միանգամից անկարելի էր ժամանակին, նոյնիսկ մինչեւ այսօր, ուստի եւ պիտի ծնէր հակազդեցութիւններ՝ դրա հետեւանք հանդիսացող ամբաստանութիւններով ու զրպարտութիւններով: Կային, ի հարկէ, նաեւ ուրիշ, աւելի յատուկ պատճառներ, ինչպէս այս մէկը: 1718ի Մայիս 7ին, Մխիթար Վրդ. ստիպուած է լինում Վենետիկից ծովով ուղևորուել Հռոմ՝ ջատագովելու Միաբանութիւնը եւ պարզութիւն մտցնելու Պոլսում Հռոմի ներկայացուցիչ, լատին պատրիարքական փոխանորդ՝ Ռայմոնդոյ Կալանի արքեպիսկոպոսի դրութեան առիթով, որում ինքն ու իր միաբանները մեղադրուած էին դրամահաւաքութեան, ազիտութեան, ժողովուրդը դէպի մոլութիւն առաջնորդելու եւ երկրային ա՛յլ մեղքերի մէջ: Ինչպէս յետոյ է պարզուում, նման ամբաստանութեան մղող պատճառ է հանդիսացել պատրիարքական փոխանորդի վստահութիւնը վայելող նրա մի հայ խորհրդականը՝ ոմն Մինաս Վրդ. Օսղան, որ քանիցս Մխիթար Վրդ.-ի աշակերտների կարգը ընդունուելու առաջարկով նրան խնդրելուց եւ մերժում ստանալուց յետոյ դիմում է նման քստմենքի քայլի: Այս կապակցութեամբ կղզի առաքած իր մի գրութեան մէջ՝ Մխիթար պարզաբանում է. «Այս պատճառով մեզի դէմ լարուած է եւ միշտ հալածած է մեզ: Մոնս. փոխանորդը պետք էր այնքան վարկ տալ այդպիսի անձի մը, մամաւանդ որ Մինաս Վրդ.-ի ամբաստանութիւններուն դէմ՝ ունիմ խաչատուր Վարդապետի մամն անձի մը տուած վկայութիւնը»¹⁴: Սա նշանակում է, որ էրզրումեցու տուած վկայութիւնը Մխիթար միշտ էլ համարել է պաշտպանական զօրեղ վահան բոլոր տեսակի ամբաստանութիւնների եւ զրպարտութիւնների դէմ:

13. ԼէՕ, Հայկական տպագրութիւն, հտ. Բ., Թիֆլիս, 1902, էջ 51:

14. *St'u Ricorso fatto nell'anno MDCCXVIII, agli E.mi e R.mi Principi i Sig.ri Cardinali del la Sacra Congr. de Propaganda Fide, dai Monaci Armeni di S. Antonio Abate, Fondati in Modone e residenti in Venezia, in Roma MDCCXVIII խորագրով գրողի*: Ընդ որում, այս մեկնումից առաջ Մխիթար Արքան հանդիպել էր Ռաչատուր Վրդ.-ին, խորհրդակցել նրա հետ եւ իր հետ վերցրել նրա մի քանի պաշտպանագրերը՝ ուղղուած Սբ. Ժողովին: Դրանից զատ, արդէն Հռոմում գտնուած ժամանակ, նա Ռաչատուրից դարձեալ խնդրում է նոր վկայական, որ ուրիշ համանման փաստաթղթերի հետ յանձնում է տալ պարութեան (Մխիթար Արքայ, Հռոմից, առ Նեղիա Վրդ., Վենետիկ, 7 Հոկտ. 1718): Հարկ ենք համարում նաեւ այս առիթով Ռաչատուր Վրդ.-ի պատասխան նամակը (13 Օգոստ. 1718) մէջբերել ընդամէնը մէկ նախադասութիւն, որն ամէն ինչ է ստուծ առ Մխիթար Վրդ. նրա ունեցած վերաբերմունքի մասին. «Եթէ ամենապատուելի եղբայրութիւն քո խնդրեալ լինիւր զսիրտ իմ, եւ զայն առաւել»:

Միւս կողմից սա նշանակում է, որ սկզբից եւեթ նման համոզում ունեցող մարդը չէր կարող Մեթոն քաղաքից յետոյ իր միաբանութեան համար առաւել ապահով վայր փնտնելիս հաշուի չառնել Վենետիկում իր մերձաւորագոյն բարեկամի ու զօրաւոր պաշտպանի գտնուելու պարագան: Մանաւանդ որ վերջինս 1707ին Պոլսից տեղափոխուելով այստեղ՝ մէկ տարի անց Ս. Ժողովի կողմից նշանակուել էր վենետահայոց առաջնորդ եւ տեղի Ս. Ոսկէ հայկական եկեղեցու հոգեւոր հովիւ: Այս լուրը ի միջի ալոյց նա անմիջապէս հաղորդել է իր Մխիթար ընկերոջը՝ 1708 Օգոստոս 4ին գրած թղթում. «Եւ մնացի աստ եւ ստեղծայ ի Սուրբ Ժողովոյն Առաքնական միսիոնար Հայոց աստ եղելոց, ըստ խնդրոյ սիրելագունեղի եղբօր Գրիգոր Վարդապետի Թոխաթեցւոյ, որ այլ ուրեք սահմանեաց գնալ: Ի յեկեղեցւոյ Հայոց ի շարքս երկից քարոզեմ...»: Ապա աւելացնում է, որ անթիւ գործերով է պաշարուած եւ զրանցից խոյս է տալիս սկսած գրական աշխատութեանց պարապելու համար: Նոյն նամակում, գրուած դեռ 1708 թուականին, էրզրումեցին յայտնում է Մխիթարին. «Եւ շատ գովեստիւ խօսեցայ ձեր վրայ առ Ս. Ժողովն»: Ասել է թէ, թէկուզ առանց առիթի, նա իւրաքանչիւր պատեհութիւն օգտագործում է Մխիթարի անձն ու գործը յաշ շոտմի եւ նրա առջեւ բարեխօսելու համար:

Միաժամանակ իր հեղինակած աշխատութիւններով իմաստասիրական, աստուածաբանական, նա հեռուից հեռու մասնակցութիւն է ունենում նոյն Միաբանութեան ուսումնագիտական աշխատանքների կազմակերպման: Դրա վկայութիւններից մէկը 1705ին Մեթոնից Մխիթար Սեբաստացու ուղղած ազաչական նամակն է դեռեւս Պոլսում գտնուող Ուսատուր էրզրումեցուն՝ իր աշակերտների համար դասագրքեր պատրաստելու եւ ուղարկելու խնդրանքով: Այս կապակցութեամբ Հ. Սահակ Ճեմճեմեանն իր «Մխիթար դաստիարակ» անտիպ աշխատութեան մէջ գրում է. «Ակզբնական շրջանին, յատկապէս Մերոնի մէջ, երբ առձեռն կար միայն Ալեքիքի Աստուածաբանութեան գիրքը, անտարակոյս Խաչատուր Վրդ.ի պատրաստած դասագիրքերը անփոխարինելի բարիք ըրած են Մխիթարի»¹⁵: Իսկ 1711, Մայիս 23ին արդէն Վենետիկից գրած իր թղթերից մէկում նա խորհուրդ էր տալիս Միաբանութեան երանաշնորհ հիմնադրին, թէ ինչպէս պէտք է աշակերտաց ուսուցանել աստուածաբանական եւ իմաստասիրական ուսումները:

Բնաւ թող այն տպաւորութիւնը չստեղծուի, թէ էրզրումեցին ինքն ապրում էր անվրդով եւ խաղաղ կեանքով: Պոլիսը թողնելու ու Վենե-

15. Ճեմճեմեան ՀԱՅՐ ՍԱՀԱԿ, Մխիթար դաստիարակ, էջ 141: Մեր շնորհակալութիւնն ենք յայտնում հեղինակին իր աշխատութեան ձեռագիրը սիրայօժար մեզ արամադրելու համար:

տիկ տեղափոխուելը հետեւանք էր նաեւ իր հանդէպ եւս եղած հալածանքների ու թշնամանքի: Որպէս գրաւոր օրինակ՝ բերենք նոյն ժամանակներում Պոլսում բնակւող Գրիգոր Մարգվանեցու «Տետրակս, որ կոչի պտուղ զրաջանութեան» (Պոլիս, 1733) վերնագրով գիրքը: Ինչպէս հեղինակը ինքն է խոստովանում, գիրքը շարադրուած է «այրած սրտիւ», որ երեւում է իւրաքանչիւր տողից ու արտայայտութիւնից. համատարած վատարանութիւններ են, ամբողջովին ժխտողական վերաբերմունք՝ դէպի հանրագէտ մտածողի բազմաբղիւն վաստակը: Էրզրումեցու հանդէպ Գր. Մարգվանեցու ունեցած նման թունոտ վերաբերմունքը լուի մի արտայայտութիւնն էր Ժէ-ԺԸ դարերի սահմանազին մեր իրականութեան մէջ մոլեգնող կրօնադաւանաբանական լարուած ու անդիլում պայքարի, որն իր ճանապարհին ժխտում ու հալածում էր ամէն մի սրբութիւն ու ազգային արժէք: Այդուհանդերձ Պաշտօնը Վրդ.ն իր պարտքն էր համարում ամէն գնով օգնել Մխիթարի ձեռնարկին, որն իր ազգօգուտ նշանակութեամբ նախադէպը չունէր մեր իրականութեան մէջ:

Իր հիմնած միաբանութիւնը, 1715ին, Վենետիկ տեղափոխելու որոշումն ընդունելուց յետոյ Մխիթարին այլեւս անբաժան էր իր լաւ բարեկամից: Ժամանակաւորապէս բաժանուելիս էլ վերջինս սովորաբար իրեն էր վստահում տեղապահութիւնը: Այսպէս, երբ 1719ին, Պաշտօնը Վրդ.ը Հռոմի Հաւատաստիւ Ս. Ժողովի կողմից ուղարկւում է Թրանսիլվանիա, Մխիթար Վրդ.ին է յանձնում Ս. Պաշտօնը: Այն մասին, որ իրենք բարեխիղճ ձեւով շարունակում են գործը, երեւում է արդէն Մխիթարի՝ Պաշտօնը Վրդ.ին ուղղած մի նամակից (1719 Մայիս 27), որտեղ յայտնում է, թէ «Ջոսֆ եկեղեցւոյն կատարեցա՛մ բարեպէս, եւ յամենայն տօնի երկու եւ կամ երեք անգամ գտանիմք յեկեղեցիմ, ասեմք գժամ եւ զպատարագ, լսեմք զխոստովանութիւն եւ տամք գգարոգ»¹⁶: Հետաքրքիրն այն է, որ յիշեալ առաքելութեան էրզրումեցին մեկնել է Մխիթարի աշակերտներից մէկի՝ Հայր Ղազարի հետ, իսկ մի քանի ամիս մնալուց եւ քարոզելուց յետոյ, երբ պատրաստուում էին վերադառնալ, Ժողովրդին նա հանդարտեցնում է՝ ասելով, որ պիտի Զանայ մնայուն առաքեալներ ուղարկել Մխիթար Աբբաճօր Միաբանութիւնից¹⁷:

Թւում էր, թէ տարիների հետ պիտի թուլանային առ Միաբանութիւնս եղած յարձակումներն ու վատարանութեան փորձերը: Իրականում, ո՛րքան աւելի զօրանում եւ ծաւալում էր նրա անդամների գիտամշակութային գործունէութիւնը, այնքան աւելի էր բորբոքւում

16. «Նամակամի Մխիթարայ Աբբայի» հտ. Ա., նամակ թիւ 61, էջ 120:

17. Մանրամասն տե՛ս ՖՈՒՈԼԵԱՆ ԼԱՅՐ ԴՈՒԿԱՍ, «Մխիթար Աբբաւայր եւ Թրանսիլվանիոյ Մխիթարեան առաքելութեան առաջին շրջանը» յօդուածը («Բազմալիպ», 1977, թիւ 1-2, էջ 139-165):

հակառակութեան ու թշնամանքի կրակը¹⁸։ Մեղադրանքները ո՛րքան էին, ա՛յնքան սնամէջ ու հիմնազուրկ։ Իբր թէ հայ միաբանները օտար վարդապետութիւն են քարոզում, որ Մխիթար Արքան ո՛րեւէ դպրատան մէջ չի ուսանել, ուստի եւ անգրագէտ է եւայլն։ Առ հաճի Յարութիւն եւ տիրացու Պետրոս 6 Յունուար 1717 թուակիր թղթում՝ Սաչատուր էրզրումեցին բացատրում է նման մտքերի սնանկութիւնը եւ Մխիթարին համեմատում սուրբ Օգոստինոսի հետ, որ «առանց վարժապետի հասկցաւ եւ . . . Արխատտէլի տասն ստորոգութիւնները»։ Աւելին՝ այդպէս մտածել, ըստ նրա, նշանակում է Սուրբ Հոգւոյն դէմ մեղանշել։ Սա ասում էր մէկը, որ ամէնից լաւ էր ծանօթ Մխիթարի ունակութիւններին։ Նրան ուսանել էր հայերէնի քերականութիւն եւ աստուածաբանութիւն, եւ ապա սքանչացել նրա յետագայ ստեղծագործութիւններով։ Նա այնքան էր կապուել Մխիթարեան Միաբանութեան, որ դեռ 1719 թուականին կազմած կտակում իր բոլոր գրուածքները՝ «յիմէն շարադրիայս եւ աստ՝ ի վեցնետիկ, տպեալս» թողնում էր «Մեհաստանին միանձանց հայոց, որ կայ ի կղզւոցն Սրբոյն Ղազարու», իսկ գերապատիւ Մխիթար Արքային կարգում «օրինաւոր ժառանգ» եւ կտակակատար։ Նրա մահից յետոյ (1740 Ապրիլ 30) Ս. Սաչի ժամապետի պաշտօնն անցնում է Միաբանութեան տնօրինութեանը, իսկ եկեղեցին՝ կղզու խնամակալութեանը։

Ահա, նման սերտ, երկիւղածութեան հասնող յարգանք ու նուիրումածութիւն գոյութիւն ունէր մեր երկու գիտնական այրերի միջեւ։ Նրանց սրտակից բարեկամութեան եւ սքանչելի օրինակն էր «Մխիթար Արքահայր եւ Սաչատուր Վարդապետ» յօդուածում Պատրիարք Աղաճանեան «Բազմավէպ»ի 1949ի Բացառիկում գրում է. «Սիրոյ եւ գործակցութեան սքանչելի օրինակը, գոր կը ցուցադրեն իրենց կեանքով Մխիթար՝ հայր միաբանական սերունդի, եւ Սաչատուր՝ տիպար աշխարհիկ կղերի, խորհրդանշանը եւ տեսականը կը մնան այն սերտ սիրոյ եւ անձնուէր գործակցութեան, որոնցմէ մեր միաբան եւ աշխարհիկ կղերը միշտ անելի պիտի ներշնչուին խրախուսելու, բարձրացնելու համար նշմարիտ կրօնքով, առաքինափայլ վարքով, լուսաւոր ազգասիրութեամբ, ընդարձակ մշակոյթով, Հայութիւնը համայն՝

18. Արծարծուող թեմայի հետ, մենք հիմնականում չեւտում ենք եղած հակառակութիւնները։ Մինչդեռ շատ էին նաեւ հիացումի եւ զնահատանքի դէպքերը, Մխիթարին աշակերտելու եւ նրա Միաբանութեան անդամ դառնալու ցանկութիւնները։ Աւելին, ինչպէս երեւում է 1740ի Յուլիս 25ին գրուած մի նամակից, Նիկողայոս Վրդ. Գրիգորեանը՝ Զմեռանեան ուխտի անունից դիմում է Մխիթար Արքային, որպէսզի վերջինս դառնայ իրենց «ընդհանրական մեծաւորը» (տե՛ս ՏԱՅՆԱՆ Է. Ղ., Նշ. աշխ., էջ 90-91)։

որում համար մեր յարատև աղօթքն է, որ ըլլայ դարձեալ «համուրց հիւսիսականաց վեհագոյն»¹⁹ :

Եթէ նոյնիսկ նկատի չունենանք այն նոր տուեալները, որոնք, վստահ ենք, պարունակում են Հռոմի դիւանները, վերորերեալն արդէն վկայում է անհերքելի այն իրողութիւնը, որ ժամանակին Սաչատուր էրզրումեցու՝ Վենետիկում ապրելու եւ ստեղծագործելու հանգամանքը ա՛յլ նախադրեալների թւում՝ վճռական դեր է խաղացել Արքիական ծովի այս չքնաղ ափը որպէս հայոց մտաւոր լուսաւորութեան կենտրոնի վերածելու հարցում:

ԼԵՒՈՆ Ե. ԼԱՃԻԿԵԱՆ

19. «Բազմապէս», 1949, թիւ 7-12, էջ 30-37: Նոյն համարում տե՛ս նաեւ ՔԻՄԸՐԱՆ ԵՒԳԻՆԷՈՍ Ն. Վ. ԿԱՐԴ., *Un défenseur de Mekhitar a Rome Khatchatur Vartapet Arakelean* ֆրանսերէնով յօդուածը, էջ 19-29: